ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոս 2024թ. N ՄՈ/395-Ա

ք. Արմավիր

«ԱՐՏԱՇԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԱՐԻՍԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Լարիսա Պետրոսյանի 2024 թվականի օգոստոսի 13-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Արտաշարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լարիսա Պետրոսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի չօգտագործված մասը 2024 թվականի օգոստոսի 16-ից 22-ը ներառյալ՝ 5 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լարիսա Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արտաշարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արտաշարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Կարինե Հարությունյանին:
3. 2024 թվականի օգոստոսի 16-ից 22-ը ներառյալ «Արտաշարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Կարինե Հարությունյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լարիսա Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 23-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ ԽՈ ՄԿՐՏՉՅԱՆ